

Վ Ի Կ Թ Ո Ռ Զ Ի Ի Կ Օ


ՀԱՆՔՐՈՒՄԻ Ա. ԱՐՁԱՅԵԱՆ Ի ՔԻ

Պ Օ Ղ Ո Ս Ի Կ

Բ Ա Ր Ո Յ Ա Վ Ե Պ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Օ. ՆՐԿԱՆԵԱՆ



Կ. ԴՈՒԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԱՑ ԱՇՃԵԱՆ
ՄԻՄՊԻԻԼԼԻԻ ԽԱՆ ՎԱՐԻ ՅԱՐԿ 35

1884

ՊՕՂՈՍԻԱ

ԲԱՐՈՅԱԿԵՊ

ՁԵՐ

Մայրն ծնաւ զմանկիկն և ինք մեռաւ ծողկահասս . տխուր մոռացօնք ճակատագրի . ընդէր է արդեօք այս , ընդէր կեանք միոյն և մահ միւսոյն , և էր , ս'վ աղետիցս , մօրը յաջորդ թողուլ մանկան մի մօրու : Հայրը երիտասարդ էր , կրկին ամուսնացաւ , երբ տակաւին մանուկն միամեայ էր , սրչափ փոքր , և չէ արժան ըսել նմա գծուծ , և միթէ յանցանք է ծնելն այս գեղանի մանկան վարդազոյն . յայնժամ ծեր բարի մարդ մը իւր պաշտպանութեան ներքեւ ընդունելով այս թրշուառ արարածը , նորա խնամահայր եղաւ , և այս մարդը իւր պապն էր . շատ անգամ մեռեալ մը պաշտպան կը կանգնի նորատի արարածի մը . նորանշան բան մ'է այս և բնական , ազատել մեռելոյն իւր ետեւ թողածը . ծերոց ծառայութիւնն է եւեթ ջանալ բարի անցորդն ըլլալ այն անթիւ գրկելոց և տուապելոց , որք կարծես բնազդմամբ բան մը կը հետազօտեն , և փոքրիկ ձեռաց որ նըպաստ կը հայցեն խաւարի մէջ . անշուշտ սյս մթին աշխարհին մէջ բարի մէկը պէտք է , որպէս զի գութը սրտերու մէջ միշտ արծարծի . մէկն ալ



պէտք է առաջնորդ այս մանկան՝ որ չունի ստրենտու մը, այժին սյն վճիտ աչք որ ազատ չըլի լեւրանց կողը. վեհ անձ մ'ալ պէտք է սիրայորդոր որ սքօղէ քաղցրութեամբ այս խորախորհուրդ կեանքն, ինչ փոյթ թէ ծեր ըլլայ այդ անձը, թէ պատանի և թէ չափահաս, ասոր համար ահա Աստուած՝ մեռերոց տէրը, տեղապահ կը կարգէ երբեմն մօր տեղ մեծ հայրը, և ծերութիւնը դառն նկատելով՝ արեւոր մարդու մը հոգւոյն մէջ մի կընոջ սիրտ կը զետեղէ:

Ուստի հեղինակ այս Պօղոսիկ, ի ծննդեանէ որբ մնաց, կապուտագեղ աշուկներով մեծցաւ՝ ուր լի էին լոյս և ստուեր պարզմտութեամբ բառեր թոթովեց, ունեցաւ նա համարձակութիւն այն թարմ և անբիծ անմեղութեան, այն հրեշտակներէն մին եղաւ, ինչպէս են անչափահաս մանուկներն, և նորա պսպր, տարիներէ կորակոր՝ կը դիտէր զանի, ինչպէս մարդիկ կը դիտեն զեթեր որ յուշիկ յուշիկ ինքնին կ'ոսկեզօծի. ո՛հ որչափ կը սպառէր արեւմուտն այս, չարչարոյն այն, այսինքն՝ ծերունին զտղայն:

Մեծ հայրն առաւ մանուկը և տարաւ իւր տուն, որ դաշտերով չըջապատեալ էր, ուստի կը նշմարուէր անհուն հորիզոն մը, զօր միայն մի փոքր մանկիկ կարէր ընուլ. դաշտերն էին դալարաւետ քաղցրասիւք զեփիւռներով որք կը ծաւալէին անտառաց և ջուրց վրայ. այս տունը մի ընդարձակ պարտէզ ունէր և այս ծաղիկ ու մարդագետին,

հասնայն բուրմուճք և կեանք զգուեցին մանուկը, զի ծաղիկները չեն նախանձիր:

Այս պարտէզին մէջ խնձորենիներն, դեղձիներն և մորենիներն կ'աճէին, մարդիկ քայլելու համար անոնց ճիւղերը կը պարզէին, ջուրին տամիւթիւնը կը դողող զար ուռենեաց ներքեւ, սպիտակափայլ բաժն մը կը նշմարուէր հոն, որ իրբեւ նպաստ, իբրեւ մի յաւերժահասրս կուգար. բոյներն օրհնեալներու տխուր տաղերը կը ճրուռողէին, և այս երգերը հանդարտ էին և քաղցրամիտանջ. աղբերակներն մեղմիկ կը դռչէին փրփրագէղ, և տերեւոց խառն ի խուռն սօսալունք կը լուռէր անոնց ձայնին հետ՝ որք կը ճռուողէին և որք մերթ լուռ կը կենային. դրախտ մ'էր այս պարտէզը ուր կը լուռէր լոյս զուարթի երգն՝ զօր երկինք կ'երգէ, հոս՝ գարնան մէջ, ո՛վ չընաղ պարտէզ, երբ երկնքի կապուտակ գոյնը փալփըլի, երկիր այն զուարթ երգը կը թոթովէր, Պօղոսիկն հրեշտակ մ'ըլլալով, եգեմի ծաղիկներէն մին դարձաւ, և մանուկը սիրեցին այս առանձնութեան մէջ, աւա՛ղ, այսպէս փարթուեցաւ նա:

Մի պարտէզ խիստ գեղեցիկ է, այնպէս չէ՞. կար հոն մանուկ մը և նորա մօտ մի ծերունի. այսպէս ահա Աստուած՝ այն բանաստեղծը միաւորելով տենչանք սրտին, աչաց փափաքանաց հետ, կը հասունցնէ վարդերը մանկան հետ, և մանուկը ծերունւոյ մը աղբրեկ հերաց հետ, զի վերջապէս բնութիւնն ալ արհեստ է. մանուկը

ծաղկանց կ'այցելէ, ասի իւր տիոց արգասիքն է,
 և սլապը տեսնելով թէ նա ծաղկանց մօտ է,
 ինքն ալ հոն կուգայ, ո՛հ, որչափ զուարթու-
 թեամբ կը խնդայ մարդ ապրիլ ամսուն մէջ. նո-
 րածին մի մանուկ, վարդագոյն և կիսամերկ,
 գետնատարած ծաղկաւէտ մարդերու վրայ. խիստ
 սիրուն է, ո՛վ Վերդիլիտ, այլ աւա՛ղ, որչափ
 չքնաղ է նա, այնքան ալ փափուկ. խիստ վը-
 տիտ է և գողար, ո՛վ գիտէ թէ պիտի ապրի,
 զի երբ նա ծնաւ՝ սեւ հով մը կ'անցնէր խիստ
 մօտէն. անգութ հո՛վ, և ո՛վ գիտէ թէ այդ ա-
 նագորոյն հովը նորէն չպիտի դառնայ, մօրմէն
 վերջը մանուկը խնդրելու: Դիեցնել պէտք է
 Պօղոսիկն, մի ուլ կը հաճի այսմ, ուստի Պօղո-
 սիկը ցատկոզ ամիկին եղբայրն է, և որովհետեւ
 կ'ոստնու, մարդն ալ պէտք է քայլէ. ուստի
 մանուկը քայլ առնել կուղէ, և Պապն այս նա-
 հապետը, կ'ըսէ. Օ՛ն քալենք: Ո՛հ քանի՛ երերուն
 կը գողգողան մանուկներն. տղայոց համար կարա-
 սիք՝ Գարիպտիս է, և մի քար՝ Սկիլլա. զի նո-
 ցա ճակատը կը հակի, ոտքերնին կը դեղեւի,
 ծունկերնին կը չոքի, այլ սակայն բոլոր այս ե-
 րերմունք ոչինչ կ'աղդեն նոցա զուարճութեանց,
 տատանումը չարդիլեր բնաւ ոտներու ծաղկիլը.
 միամեայ ըլլալ՝ հպարտ ըլլալ կը նշանակէ. զար-
 դանալն է՝ ատրել: Պօղոսիկը իւր առաջին քայ-
 լափոխը կ'առնու, կ'ուզէ նա և ուրիշ քայլեր առ-
 նուլ, (Մայրե՛ր, ճիշտ ձեր որդւոց կը նմանի Պօ-

ղոսիկն ալ): Ահա՛ նոր տեսարան մ'ալ, մանուկը
 կ'առաջնորդէ ձեր պապուն. — Զգուշացի՛ր որ
 չ'իյնաս. — լա՛, այսպէս. — Գնա՛ առանձին: Պօղոսիկը
 քաջ է, վտանգի կ'ենթարկուի, կը վարանի, կը
 գոչէ, կը յուսայ և յանկարծ նորէն քայլ կ'առ-
 նու, գողգոջուն ձեռքերով Պապը կը շրջապատէ
 զանի. ինք գողգողալով մանուկն ալ կ'երերցը-
 նէր, և այս մեծաձայն քրքիջներով կը վերջա-
 նար: Ո՛հ, ինչպէս որ մարդիկ չեն կրնար նկարել
 մի աստղ կամ մի անտառ, արեւու ճառագայ-
 թներէ շրացեալ, այնպէս ալ ոչ ոք պիտի կըր-
 նայ մի փոքրիկ մանկան ծիծաղին մինչ խոր թա-
 փանցելու. ծիծաղն այս մանկան սէրն է, անմե-
 ղութեան պսակն է, ծաղկանց փթթումն, անյու-
 սալի գոհունակութեան համարձակութիւնն, ան-
 բրժութեան փառքն, կանգման հպարտութիւնն,
 խաղաղութիւնն, տեսակ մը տգիտութիւն ամե-
 նագէտ, այս ծիծաղը՝ երկնից յայտնութիւնն է,
 Աստուծոյ ներկայութիւնը:

Մեծ հայրը՝ դիմօք պատկառելի, Աստ-
 ուածաշունչի մէջ դնելու արժանի, մի մնգ՝ որ
 Մովսէս մտերմաբար դո՛ւ կոչեց զնա, Գորեք ըն-
 րին վրայ. այս մարդը միմիայն հրապուրիչ բարի
 ձեր պապ մ' էր, երբէք հրապոյրներու չէր դի-
 մանար, և անգգայչ կը պատկառէր մանուկէն,
 կը խորհրդակցէր նորա հետ և կը պատուէր զա-
 նի. այս մանկական ուղեղին մէջ լուսնի լրումն ու
 խաւարի խուսափումն կը դիտէր. Պօղոսիկն ամէն

ամիս մի նոր եղանակ կը հնարէր, խօսելու համար մտածութեան աւիւնն է այն, տեսակ մը բառերու յամբ սլացումն է որ կը բարձրանայ, յետոյ կը խոնարհի, և դարձեալ կը կանգնի մի դուարթ թրթումամբ, և գաղափար մը չգոյանալուն համար երգով կը վերջանայ. Պօղոսիկը ձայներ կը միաւորէր և թռիչ կուտար անոնց, կը տաղաչափէր տեսակ մը թռչտուն մթին տողեր, կը քերթէր նա, կը շատախօսէր, և կը խժժէր անլուելի կերպով, և հրապոյրք լի էին ասն մէջ, կ'երգէր նա, ամենքն ալ կը ինդային, և անդորութիւն կը տիրէր. կարծես թէ նշան կուտար ուրախութեան, որ գայ ընդ փոյթ, և ծառերն այս ազուն վրայ բան մը կը հծծէին մէջերնին. Պօղոսիկը ցնծութեան թաքուն զօրութեամբ մը տան մէջ ամենայնի կ'իշխէր, մեծ հայրը իւր սիրուն հպատակն էր, և իրեն կը հընազանդէր, իրաւունքն ալ այնպէս չէ. — Հայր, սպասէ, կ'ըսէր նա և կըսպասէր. — չէ', եկուր, — և ծերունին կուգար: Սպիտակափայլ ձմրան վրայ գարունը մանուկ հասակի ազգեցիկ զօրութիւնն ունի. ինչ սիրուն ընտանիք մը կը կազմէին բունասէր այս մանուկն և հորակոր պապն այն, որչափ կուգէր հաճոյանալ յունվար ամիսը մայիս ամսոյն, քանի' ուրախ կը թափառէին այս երկու համանման անմեղութիւններն, երբ թռչնոց ճրուռողումը լսէին. այն ժամանակ մանկիկը երկամեայ էր և ծերունին ութսունամեայ. օր մը մին

մուցաւ, իսկ միւսն յիշեց, և մանուկն եղաւ յիշուլը: Գիշերն երբէք չէր խաւարեր նոցա համար, մեծ հայրը մտածել կուտար Պօղոսիկին և Պօղոսիկը հաւատալու կը յորդորէր Պապը, կարծես թէ այս չքնաղ վայրին մէջ իւրաքանչիւր օք իւր հոգին փոխանակելով՝ Աստուծոյ մէկ կողմը կը ցուցնէին միմեանց. ամէն բան կը միացնէին, ցերեկները իրենց խաղաղիկները, և գիշերներն իրենց քունը, ո՛հ, ինչ չքնաղ սէր է այս երկու բարի մտորոց սէրը, մի սենեակ սենէին, երբէք մէկզմէկ չէին թողուր, ինչ չքնաղ պատեհ է միութիւն գոյանալու համար, զի մեծ հայրը չունէր այն քաղցր ձայնը որ հեգել տար այս մտադիր և հիացեալ հրեշտակին, և կամ ըսէր. ո՛վ սիրելագոյն իմ Պօղոսիկ, զուարթ խօսակցութիւն, անմահ հծծիւն. ահա այսպէս կը խօսակցին կատարակ թռչուններ գիցարանութեանց մէջ. — Զգուշացիր, կ'ըսէր ծերունին, ջուր կայ, ո՛չ այդչափ հեռի, ո՛չ այոչափ մօտ. տեսա՞ր Պօղոսիկ, ստքերդ թրջեցիր: Գիտնալով չէ, հայրիկ. — քարերուն մօտէն մի անցնիր. — Այո՞ պապիկ. — Մարդերուն մէջ գնա: Եւ երկինն էր պայծառ. խաղաղ և շքեղ, և արեւն էր գեղանը՝ շոյլ և անամպ, զի տայր համբոյր մանուկ ճակտին շրթամբք պապին:

Հայրը ուրիշ տան ուրիշ կնոջ հետ կը կենակցէր. ի զուր կը բողոքէ մի մեռեալ կին իւր գերեզմանին խորէն ի ներկայութեան նորեկ տիկ-

նոյն : Հայրը այն երկրորդ կնոջմէն մի մանչ զաւակ ունէր, և Պողոսիկը չգիտեր զայս ինչ փոյթ նմա՝, երջանիկ է նա, երանեալ է, զուարթ է, հանդարտ է, զի պապը իւրն է միայն, միթէ նորա համար ուրիշ մարդ կա՞ր :

Պապը մեռա՛ւ :

Երբ Սիմ ըսաւ Ռաքելին, երբ Բոոս ըսաւ Հուսթին, ողբացէ՛ք, զի ես պիտի մեռնիմ՝, յայնժամ Ռաքել և Հուսթ լացին . սակայն փոքրիկ մանուկը անդէտ էր բոլորովին, աչիւնք նորա այսր անդր յածին, ճակատն իւր երազէ : Պապը նախազգալով երբեմն իւր մահը ըսած էր նմա . Պողոսիկ, աւա՛ղ պիտի մեռնիմ ես և շուտով . ալ չը պիտի տեսնես քու թշուառ ծերուկը որ կը սիրէր զքեզ . — Ոչինչ կը մարէ այդ գողտրիկ լոյսը . և միամիտն այս մանուկ ամենայն զուարթութեամբ երգելով իւր ծիծաղը կը շարունակէր :

Մի գիւղական աղքատ եկեղեցի, ինչպէս շինականաց բնակարաններն էին, և որոց միակ պաշտպան են զանգակատուններ՝ բացուեցաւ . ինձ այնպէս կը թուի թէ ես ալ յուղարկաւորութեան գացած էի . քահանայն լռելեայն պարզ դամբանական մը ըսաւ . բարեկամներ և ազգականներ տուն գալով անուշ պապիկը խնդրեցին որ հողին յանձնեն . դաշտերը զուարթ էին այս տխուր հանդէսին շուրջը . կարծես ծաղկունք ախորժ կ'զգան, երբ դադաղ մը անցնի . սակա-

ւաթիւ ծեր մարդիկ բարձրաձայն կ'աղօթէին . ապառաժուտ ճամբէ մը կ'երթային յուղարկաւորք . ճամբուն եզրը կօլ մը պառկած էր, ո՞ր մայրական աչօք կը գիտէր անցորդները . գիւղացիներն ամիսն կարճ բաճկաննին հագած էին, և մանուկը խոնարհ դագաղին կը հետեւէր . մեռեալը մտտակայ գերեզմանատունը տտրին . որ եկեղեցւոյն կիցն էր . վայր ամայի, որու պատն է խարխուլ, անպաճոյճ և անշուք, նոճիներով չէին զարդարած զայն . ոչ դուռ ու տապանաքարեր կային . և ոչ խարուսիկ արձանագրեր, այս վայրին մէջ լի էին միայն խաչ և փոս . այս վայրը անաչառ վայր մ'է, ուր մահն ի խոր քուն կը խորասուզի ըստ կամաց Աստուծոյ . դուռն նորա փայտաչէն, զոր գիշերներն փակէին, և խաչաձև բաղեղն կը շրջապատէր բոլորտիքը . փոքրիկ մանուկը գերեզմանատան մուտքը զգուշութեամբ գիտեց . խորին և անքննելի բա՛ն .

Ճակատագիրը տղայոց համար ցնորք մ'է . և կեանքը՝ երազ մը կը նկատեն . մութ կը պատէ, աւա՛ղ, երբ աստղեր ծագին . Պողոսիկն երեք տարեկան էր . — Գնա՛ . ագեղ սագայել, չար տղայ, կը զայրանամ երբ կը տեսնեմ զանի, գընա՛, գնա՛ . պիտի ծեծեմ զքեզ . ո՛րչափ անտանելի է նա . բարի եմ որ տակաւին սեղան կ'ընդունիմ զինքը, շրջազգեստս արատեց, բոլոր կաթը լափեց, քեզ մտռան դնելու է, քեզ չոր հաց տալու է . ա՛հ, ի՛նչ ագեղ է . — Ո՞րու հա-

Մտր կրօնին այս խօսքերը Պօղոսիկըն համար .
 խնդճ սիրուն տղայ, աւա՛ղ. երբ պապը անչըն-
 չացաւ . անձանօթ մէկը տեսաւ Պօղոսիկը . նա իւր
 հայրն էր . յետոյ կին մ'ալ մերկ կուրծքով, նա
 կը գիեցնէր մանկիկ մը որ իւր եղբայրն էր :

Այս կինը իսկոյն ատեց զՊօղոս . մի մայր մի
 Մփինքօ է . քաղցր է նա և անհայտ . անձնա-
 նուիրութեան կողմէ սպիտակ է , և նախանձու
 կողմէ սեւ , քաղցր՝ իւր զաւակին համար, և խիստ՝
 ուրիշի զաւակին համար , չարչարուիլ , պատճառը
 չգիտնալով, ինչպէս են մարտիրոսներ , մարգարէ-
 ներ , և առաքեալներ . խիստ լաւ , իսկ մի մա-
 նուկ մի ուրուական է , ոսկի հերովք . տակաւին
 մարդ չեղած տարագիր մ'ըլլալ :

Կաղնոյ շուքէն վերջը մտնենի փշալից թու-
 փերուն պատահիլ, ինչ փոփոխութիւն :

Պօղոսիկը այլ եւս բան մը չէր հասկնար ,
 երբ յերեկոյն տուն դար , իւր սենեակը սգա-
 պատ կ'երեւնար իրեն . ընդերկար լացաւ նա ,
 այլ ո՛չ մէկու մը համար , սոսկաց նա ահաբեկ ,
 որպէս եղէգ , որ դողայ մրկալից քամիներէն .
 երբ արթննար, սարսափով իմն կը դիտէր . ո՛հ, ի՞ն-
 չու արդեօք կը ծնին թշուառ մանուկներն . այլ
 տան մէջ իրեն համար ոչ լոյս կար և ոչ պատու-
 հան . արշալոյսն ա՛լ չէր ճանչնար զանի, երբ կու-
 գար , կը գոչէր մայրը . Գնա՛, դուրս հանեցէք ա-
 սի : Եւ Պօղոսիկն ստուերին մէջ, որպէս մի որրան
 զոր ընկղմեն , յուշիկ յուշիկ խորասուզեցաւ . նա

որ ուրախ էր՝ տրտմեցօ . և անոր հետ կը վըջ-
 տակցէին թուշուններն և ծաղիկներն , և թռչնոց
 այս սիրուն պարազլուխը չարչարանք մը եղաւ
 այժմ . - Եւ մտնուն կըսէր . ո՛հ, կընեղէ զիս, աղ-
 տեղի է , գետինները կը սողայ , ափսմբու մէջ
 կը լողայ : Պօղոսիկին խաղաղիկները առին ձեռքէն
 միւսին տալու համար . հայրը խիստ յարած ըլլա-
 ւով իւր կնոջ՝ ինչ որ ընէր՝ չէր խօսեր . հրեշտակ
 մը ըլլալէ վերջ՝ բորո՛ս մ'ըլլալ . կինը երբ Պօղո-
 սիկը տեսնէր , թո՛ղ կորի երթայ , կըսէր , և ա-
 նէժք գգուանաց փոխուէին , երբ տեսնէր իւր
 հարազատ որդին . -

Եկուր . եկուր սէրգ իմ . եկուր , ով իմ եր-
 ջանկութիւն . Աստուած իմ , քու հրեշտակներէդ
 գեղեցկագոյնը գողցայ , և երկնքէն մաս մը առի,
 անոր համար խանձարուրք շինելու . Տէր իմ , հը-
 րեշտականման մանուկ մ'է ասի . բարի Աստուծոյն
 լիութիւնը ձեռքս ունիմ . տեսէ՛ք , ինչ գեղեցիկ
 է . ո՛հ կը սիրեմ զքեզ , դու մարդ պիտի ըլլաս .
 արդէն խիստ ծանր է նա , զի գրեթէ ոտքի ել-
 նող մի մանուկէ աւելի ծանրութիւն ունի . ու
 տիցդ համբոյր տամ ես . և իմ լոյս քենէ առ-
 նում : - Եւ Պօղոսիկը կը յիշէր այն դոյզն յիշողու-
 թեամբ զոր ունին վարդ և գառնուկ , թէ իրեն
 համար երբեմն լսած էր միեւնոյն խօսքերն :

Ասկիւն մը գետնին վրայ կ'ընէր իւր ճաշը ,
 համը էր դարձեր , չէր խօսեր , ալ չէր ողբար .
 մանկութիւնը երբեմն զօրեղ է և խորհախորհուրդ :

Յաճախ դրան վրայ պշուցեալ՝ դառն նայ-
ուածքներ կը նետէր . օր մը տան մէջ ամէն կողմ
փնտռեցին զինքը և չգտան . ձմեռ էր եղանակը .
ձմեռը կ'ատէ զմեզ և գիշերը մի նենգող է , որ-
պէս մի որոգայթ . դուրսը ձիւներու մէջ պզտիկ
քայլերու հետքերն կը ջնջուէին :

Հետեւեալ առաւօտ մանուկը գտան . մինչ-
չեւ իսկ յիշեցին այն ձայները , զորս հեռաւորու-
թիւնը անլսելի ըրած էր . մինչեւ անդամ մէկը
խնդացեր էր , կարծես լսելով : ամպերու և ըստ-
ուերներու մէջէն՝ ուր մունչեն հողմունք , չգիտեմ
ինչ տեսակ ձայն մը որ կը յափշտակէր հայրնի , հայրնի
ձայնը : Բոլոր բնակիչք զգածեալ՝ զանի փնտռե-
լու ելան . մանուկը գերեզմանատունն էր . հան-
դարտ էր նա , ինչպէս սեաւ գիշեր մը , ինչպէս
մարմարինն , դրան առջեւ գետնատարած էր և
սառած . ինչպէս առանձին եկած էր մինչ այս
տխուր վայրը ուր ոչ լոյս կը պլպլայ . իւր բազ-
կաց մին դեռ ցանկին դուռը բռնած էր . այն-
պէս կը թուի թէ բանալու աշխատած էր , յու-
սալով թէ մէկը օգնէ իրեն . ընդերկար մենաւոր
մթութեան մէջ մնացած էր . յետոյ վերջին շունչը
փշելով ինկած էր գետնին վրայ , մի քանի քայլ
հեռի իւր ծեր պապէն , չկրնալով զարթուցանել
իւր բարեկամը՝ ինքն ալ քնացեր էր մօտը :



56

ԱՄԱՆՈՐ

Անց սահեցաւ դերթ փայլակ
Ամ մի ողջոյն բովանդակ ,
Եղովկ . ընդ հետս իւր թողեալ
Ողբ , արտասուս , աղաղակ :

Այս իցէ յար սոսկ բաժին
Վատաբայտիկ մահացուին ,
Խորասուզիլ սպառնապուռ
Յունայնութիւն դառնաղին :

Իբր առցէ զկայ այս կենցաղ
Յաւերժ ի խինդ ի ծիծաղ ,
Իբր ցընծացեն համադոյք ,
Տեսեալ զմրրիկն փախ ի փախ :

Ի՛նչ դարք դարձցին յետս ընդդէմ ,
Ի՛նչ անցելոյն վե՛հ նրսեմ
Երեւեսցի լուարձակ
Յաւիտենից յայն ի բեմ :

Ճակատագիր որպիսի՛ ,
Լինին հանուրք ի փոշի .
Արդարութիւն զիւր կըշիւ
Ունի ձեռամբ կորովի : -

Սակայն խրախոյս օ՛ն առցուք ,
Զի ըզբարեաց արդ շըշուկ
Բերէ ընդ իւր ամանոր ,
Դադարեացի ողբ և սուգ :



Ըզդող մահու թողցեն վաղ,
 Լըռեսցի կոծ և աւաղ,
 Յուսապատար ցուցանի
 Ըստուեր մահու և դպալ :
 Վե՛ն լաւութիւն ի տարւոջ
 Ուռճայուցէ զիւր բողբոջ
 Յազնուասիրտ ի մարդիկ ,
 Ըզքնաւս առ իւր ատցէ կոչ :

Աներկեւան տեսից ես
 Ի յարտորայս զիզաղէզ
 Իրախայրիս սըփռեալ յոյժ
 Իբր յապարանըս բեհեզ :

Կայցուք շքնորն ըզբախտէն
 Վասըն բարեաց համօրէն ,
 Զորս տայ բնութիւն առ մարդիկ ,
 Աւատ առատ քան զամէն :

Ժըպիտ ի շուրթն երեւի
 Ամանորս այս գեղանի ,
 Ակնկալեօք ճոխացեալ ,
 Սըփուէ շքնորնս լիռլի :

Հաշտ հայեացին մեզ երկրին ,
 Փակեցի մեզ վե՛ն խորին ,
 Զի ամանորս աւետէ
 Վայելս , հրճուանս անմեղին :

Թե՛ նդ հուպ տեսից մի հրեշտակ ,
 Որ ժըպտի ինձ սիրունակ ,
 Զայն կարծեցից ամանորս :
 Որ երգէ զիւր յաղթանակ :

Ս. Գ.

